

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ
ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով հաստատված միջոցառումների շրջանակներում ծրագրային առաջարկներ մշակելու և միջազգային կապերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) համակարգմամբ դրանք միջազգային գործընկերներին ներկայացնելու անհրաժեշտությունից:

ՀՀ կառավարության կողմից Կոմիտեի 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով հաստատված միջոցառումների, այդ թվում՝ Հողային հարաբերությունների կարգավորումների պարզեցման, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական գնահատման, ՀՀ համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրման և կադաստրային քարտեզներում ամրապահումների ուղղման իրականացման նախագծերի մշակումը բովանդակային մասի ապահովման տեսանկյունից պահանջում է համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքներ, որով և հիմնավորվում է փորձագետի ներգրավումը:

Միջազգային կապերի բաժնի աշխատակիցները ներգրավված են և ամենօրյա հիմքով իրականացնում են հետևյալ աշխատանքները.

1. գործընկեր պետությունների հետ փոխշահավետ համագործակցային կապերի ստեղծման, համակարգման, մշակման և զարգացման աշխատանքներ,
2. գործընկեր պետությունների միջազգային համագործակցության գրասենյակների հետ փոխշահավետ համագործակցային կապերի ստեղծման և զարգացման աշխատանքներ,
3. միջազգային կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցային կապերի ստեղծման, համակարգման, մշակման և զարգացման աշխատանքներ,
4. ՀՀ-ում հավատարմագրված, ինչպես նաև օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ կապերի խորացման, համագործակցության առավել ամրապնդման աշխատանքներ,
5. համաձայն ՀՀ կառավարության արտաքին քաղաքականության գերակայությունների՝ արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման նպատակով մշտական կապի ապահովում ՀՀ արտաքին գործերի նախարարության (այսուհետ՝ ԱԳՆ) հետ,

6. միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով հանդիպումների, գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպման և անցկացման աշխատանքներ,

7. միջազգային համագործակցության ուղղությամբ անհրաժեշտ տեղեկատվության ձևեր բերման, մշակման և ստեղծման աշխատանքներ,

8. պատասխանատու ուղղություններով գործուղումների հաշվետվությունների ձևակերպում և անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանություններ,

9. միջազգային ծրագրերի մշակման և համակարգման աշխատանքների կազմակերպում:

Պետք է նշել, որ այլ բաժիններից կամ վարչություններից ևս մեկ քաղձառայող Բաժնում ներգրավելը նպատակահարմար չէ, քանի որ որակյալ աշխատանքի և Կոմիտեի որդեգրած մասնագիտական բարձր պահանջներն ապահովելու համար անհրաժեշտ է ոլորտի մասնագետ փորձագետ, որը կկարողանա ապահովել միջազգային գործընկերներին ներկայացվող նախագծային որակյալ և բովանդակային առաջարկների մշակումը, հետևաբար՝ դրանց արդյունավետությունը միջազգային համագործակցության հնարավորությունների իրացման տեսանկյունից:

2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսված աշխատանքը իրականացնելու նպատակը Հոդերի նոր նպատակային նշանակությունների հողատեսքերի գործառնությունների ձևավորումն է, ինչպես նաև Կոմիտեի համար անկյունաքարային նշանակություն ունեցող մի շարք այլ նախագծերի շրջանակներում աշխատանքների արդյունավետ իրականացումն է:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պայմանագիրը կնքելու պահից սկսած մեկ տարի ժամկետով:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նշվածն իրագործելու համար անհրաժեշտություն է առաջանում կատարելու փորձագիտական աշխատանք, որի հիմնական ուղղություններն են՝

- Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների ուսումնասիրում,

- Հայաստանում տիրող պայմաններին համահունչ մեթոդաբանության մշակում՝ հիմնվելով միջազգային հաջողված փորձի ուսումնասիրման վրա,

- ՀՀ կառավարության հողային քաղաքականությանն աջակցելու շրջանակում Կոմիտեի նախաձեռնած բարեփոխումների իրականացման գործընթացի մասնագիտական մշտադիտարկում,

- նախագծի իրականացման ողջ ընթացքում մասնագիտական խորհրդատվության տրամադրում՝ միջազգային փորձի և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ,

- հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով հողօգտագործման գործիքների և սխեմաների վերաբերյալ առաջարկների մշակում,

▪ հողերի օգտագործման ռեժիմների սահմանմանն առնչվող կարգավորումների հստակեցում,

▪ ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու միջոցով հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնությունների վերախմբավորման իրականացում,

▪ օրենսգրքի այլ բաժիններում նկատված անճշությունների, անորոշ սահմանումների ու ձևակերպումների խմբագրում,

▪ ընթացիկ հաշվետվությունների կազմում,

▪ եզրափակիչ հաշվետվության կազմում, որը կներառի նախագծի արդյունքները, հետագա քայլերի վերաբերյալ խորհրդատվություն:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքների գնահատման չափանիշներն են.

▪ Միջազգային գործընկերներին ներկայացվող միջազգային ծրագրերի քանակի աճ,
▪ Միջազգային գործընկերներին ներկայացված ծրագրերի հաստատում և գործնական մեկնարկ,

▪ Ծրագրերի մշակման, մասնագիտական տեղեկատվության հավաքագրման և ամփոփման վրա ծախսվող ժամանակի կրճատում,

▪ Կոմիտեի և բաժնի գործող կանոնադրությունների խստիվ պահպանում,

▪ Աշխատանքային ճշտապահություն:

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՔՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝

▪ ՀՀ քաղաքացիություն,

▪ բարձրագույն կրթություն,

▪ իր լիազորություններին վերաբերող անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն,

▪ անհրաժեշտ ծրագրային փաթեթների կիրառման հմտություն,

▪ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն,

▪ թիմային աշխատանքի ունակություն,

▪ հաշվետվությունների, փաստաթղթերի կազմման և ներկայացման ունակություն,

▪ բանակցություններ վարելու կարողություն,

▪ փոփոխությունների կառավարում,

- ժամանակի կտրավարում:

8. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Փորձագետը Կոմիտեին տրամադրվող փորձագիտական ծառայությունների շրջանակում պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

- օրենսդրական դաշտի գնահատում,
- իրականացվող բարեփոխումների համար անհրաժեշտ քայլերի և միջոցառումների վերաբերյալ առաջարկների ներկայացում,
- միջազգային, եվրոպական և հետխորհրդային երկրների փորձի ուսումնասիրում և վերլուծում,
- մի շարք այլ օրենքներում և այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկների ներկայացում,
- միջազգային գործընկերների հետ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն ներկայացվելիք թեմատիկ նախագծերի վերաբերյալ մասնագիտական տեղեկատվության, համապատասխան հիմնավորումների ապահովում: